



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**24 հուլիսի 2017 թվականի N Մ - 631 - Ա**

**քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013  
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ  
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ  
ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ)**


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2017 թվականի հուլիսի 12-ի համաձայնեցման թերթը, ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.*

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից ձեռքբերված փողոցային ԼԵԴ լուսատուները (630 հատ) (630 տեղ, 3,276 կգ քաշով, 66,465 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 721,000 դրամ, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա որոշմամբ (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա, 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա, 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-392-Ա և 2016 թվականի նոյեմբերի 11-ի N Մ-1094-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**24 հուլիսի 2017 թվականի N Մ-632-Ա  
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ  
10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հուլիսի 20-ի համաձայնեցման թերթը, որոշում է.

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված հուշանվերները (40 տեղ, 608 կգ ընդհանուր քաշով, 6,208.50 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 27,041.88 չինական յուան, ցանկը կցվում է, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ




Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ց Ա Ն Կ

«Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի շրջանակներում ստացված բեռի

	Ապրանքի անվանումը	Քանակը	Միավորի արժեքը	Արժեքը (ԱՄՆ-ի դոլար)
1.	Գուլպաներ սպիտակ բամբակե	1100	0.96	1,056.00
2.	Պարանների տուպրակ 210D OXFORD սև	1100	0.58	638.00
3.	Սրբիչ սպիտակ բամբակե	1100	0.81	891.00
4.	Վզկապ կարմիր	2200	0.34	748.00
5.	Տոպրակ նեյլոնե	300	0.19	57.00
6.	Գունավոր դրոշակներ	2000	0.93	1,860.00
7.	Պլաստմասե հուշանվերներ	65	6.50	422.50
8.	Պլաստմասե հուշանվերներ	20	7.80	156.00
9.	Պլաստմասե հուշանվերներ	23	10	230.00
10.	Պլաստմասե հուշանվերներ	10	15	150.00
Վեց հազար երկու հարյուր ութ դոլար հիսուն ցենտ				6,208.50





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**


**26 հուլիսի 2017 թվականի N Մ-633-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ  
10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հուլիսի 24-ի համաձայնեցման թերթը, որոշում է.*

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված այցենշանները (3 տեղ, 30 կգ ընդհանուր քաշով, 1,350 ԱՄՆ-ի դուլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽԱԳԻՏ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**1 օգոստոսի 2017 թվականի N Մ - 634 - Ա  
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ  
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Երևան իմ սեր» հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հուլիսի 17-ի համաձայնեցման թերթը, որոշում է.*

1. Սահմանել, որ «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից ձեռք բերված վերելակը (2,649 կգ ընդհանուր քաշով, 16,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 837,325 դրամ, «Արարատյան» մքասատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-490-Ա որոշմամբ (2013 թվականի ապրիլի 23-ի N Մ-253-Ա, հոկտեմբերի 25-ի N Մ-963-Ա, 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-622-Ա, 2016 թվականի մարտի 18 N Մ-186-Ա և 2017 թվականի հուլիսի 14 N Մ-595-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԵՄԱԿ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**02 օգոստոսի 2017 թվականի N Մ-635-Ա**  
**քաղ. Երևան**  
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի հունիսի 23-ին)**

**ԱՄՆ-ի «ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐ՝ «ՓԱՐԱՄԱՋ ԱՎԵՏԻՍՅԱՆ» ՄԱՍՆԱՇԵՆՔԻ  
ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ»  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի 2017 թվականի հունիսի 8-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 15-ի N 01.1/14-2/10761-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի օգոստոսի 1-ի N 02/14/13519-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 14-ի N 6/3-8/7879-Db24-7DG-9 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «Ամերիկյան համալսարան» կորպորացիայի կողմից 2017 թվականի հուլիսի 1-ից մինչև 2061 թվականի հունիսի 30-ը (44 տարի) ընկած ժամանակահատվածում իրականացվող՝ 1,225,438,082 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին ուսումնական նոր՝ «Փարամազ Ավետիսյան» մասնաշենքի անհատուց ժամանակավոր օգտագործման հանձնում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 01511187) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

ԱՄՆ-ի «Ամերիկյան համալսարան» կորպորացիայի հետ (300 Լեյքսայդ Դրայվ, 12-րդ հարկ, Օքլենդ, Կալիֆոռնիա 94612) 2011 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված պայմանագրում (2017 թվականի մայիսի 11-ին կնքված համաձայնագրում) նշված գործարքը, որով


նախատեսվում է անշարժ գույքի անհատուց ժամանակավոր օգտագործման հանձնում՝ 1,225,438,082 դրամ կադաստրային արժեքով:

3. «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության օրենսդրության առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:



**Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**



Հ Ա Ս Ս Ա Տ Վ Ա Ս Է



«Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրամ» կազմակերպության  
Փոխնախագահ Աշոտ Ղազարյանի կողմից

«21» հունիսի, 2017թ.



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԱՐԱՆԻ ԼՈՐ «ՓԱՐԱՄԱԶ ԱՎԵՏԻՍՅԱՆ» ՄԱՍՆԱԾԵՆՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ»  
Ծ Ր Ա Գ Ի Ր**

1. Ծրագրի նպատակը	<p>Ծրագրի հիմնական նպատակն է «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի (ՀԱՀՀ) տարածքի ընդլայնումը և շենքային պայմանների բարելավումը, որի արդյունքում անհրաժեշտ պայմաններ կապահովվեն ՀԱՀՀ-ի ընդլայնված կրթական և գիտահետազոտական ծրագրերի իրականացման համար: ՀԱՀՀ-ի նոր մասնաշենքի օգտագործումը կնպաստի հետևյալ նպատակների իրականացմանը.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ՀԱՀՀ-ի շենքային պայմանների բարելավմանը՝ ժամանակակից սարքավորումներով հագեցած նոր լսարաններով, լաբորատորիաներով, գրադարաններով համալրման միջոցով,</li> <li>2. ՀԱՀՀ-ի կողմից իրականացվող կրթական և գիտահետազոտական ծրագրերի ընդլայնմանը ինչպես Հայաստանում, այնպես էլ տարածաշրջանում,</li> <li>3. Հայաստանի կրթական համակարգում առաջատար կրթական տեխնոլոգիաների ներմուծմանը,</li> <li>4. Հայաստանի կրթական համակարգում օտարերկրյա ուսանողների լայնածավալ ընդգրկմանը,</li> <li>5. ՀԱՀՀ-ի միջազգային հավատարմագրմանը և ճանաչմանը,</li> <li>6. Հայաստանի և օտարերկրյա կրթական հաստատությունների կրթական առաջատար տեխնոլոգիաների փոխանակմանը և Հայաստանի միջազգային կապերի ընդլայնմանը կրթության և գիտության ոլորտում,</li> <li>7. Հայաստանի տարածքում նորարարական ճարտարագիտական լուծումների ներմուծմանը, մասնավորապես հետադարձ ճապահային ձգման սեյսմակայուն տեխնոլոգիա, արտանետվող նյութերի ֆիլտրացման համակարգ.</li> </ol>
-------------------	---

	հաշմանդամների համար 100 տոկոս մատչելիության ապահովում, արևային էներգիայի օգտագործում և այլն:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնությունից:
3. Բարեգործը	ԱՄՆ-ի քաղաքացի՝ հայազգի բարերար պրն. Էդվարդ Ավետիսյանը և Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիան (ՀԱՀԿ), ԱՄՆ-ում գրանցված ոչ առևտրային, շահույթ չհետապնդող կազմակերպությունը, որը հանդիսանում է Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրամի հիմնադիրներից մեկը: Հասցե՝ Բրոդվեյ 1000, տարածք 280, Օկլենդ, Կալիֆոռնիա 94607, ԱՄՆ:
4. Ծրագրի կատարողը	Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիա(ՀԱՀԿ) Հասցե՝ Բրոդվեյ 1000, տարածք 280, Օկլենդ, Կալիֆոռնիա 94607, ԱՄՆ:
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրամ, Մ. Բաղրամյան պողոտա 40/1, Երևան: Բնագավառը՝ Կրթական:
6. Ծրագրի բյուջեն	Երևան, Բաղրամյան պողոտա, թիվ 40/1 հասցեում տեղակայված անհատույց հատկացվող «Փարամազ Ավետիսյան» շենքի կառուցապատման փաստացի արժեքը կազմել է 16,000,000 ԱՄՆ դոլար (մոտ 6,000,000,000 ՀՀ դրամ): Համաձայն ՀՀ կառավարության առևտրի նախարարի կազմակերպության պետական կոմիտեի կողմից 04/04/2017-ին սրված թիվ US-03/04/2017-2-0161 տեղեկանքի շենքի կառուցարարին արժեքը կազմում է 1,225,438,082 (մեկ միլիարդ երկու հարյուր քսանհինգ միլիոն չորս հարյուր երեսուներեք հազար ութսուներկու) ՀՀ դրամ:
7. Բարեգործությունն առաջադր	Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրամը և համալսարանի ուսումնական ծրագրերում որպես մասնակից ներգրավված ներկա և գալիք ուսանողներն ու շրջանավարտները, գիտական աշխատողները և դասախոսական կազմը, Հայաստանի կրթական համակարգը, տարածաշրջանի բնակչությունը: Շենքը հանձնվում է օգտագործմանը՝ սկսած 2017 թ. հունիսի 21-ից: Շենքի շահագործման և պահպանման ծախսերը պետք է կատարվեն ՀԱՀՀ-ի կողմից ու չեն ազատվելու ԱՀՀ-ի վճարումներից: Այնուամենայնիվ, ուսանողների ուսման վարձերը միայն 30%-ի չափով են փակվում համալսարանի ծախսերը: Ավելին, կարիքավոր և լավ սովորող ուսանողները ստանալու են ուսման վճարի գերմիսն 90%-ի չափով:



		Դասախոսները իրենց գիտական աշխատանքների ծախսերի համար ստանալու են ֆինանսական օգնություն 1 (մեկ) միլիոն 22 դրամի չափով:
8.	Օրագրի իրականացման տևողությունը	Օրագրի իրականացման տևողությունն է 44 (քառասունչորս) տարի՝ 01 հուլիսի 2017թ.-ից մինչև 30 հունիսի 2061թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	22 կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2005թ. օգոստոսի 5-ի N Մ-391-Ս որոշման և Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիայի և Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամի միջև 2011թ. դեկտեմբերի 15-ին կնքված պայմանագրի համաձայն՝ 22, Երևան, Բաղրամյան պողոտա, թիվ 40/1 հասցեում տեղակայված «Փարամազ Ավետիսյան» շենքը ամբողջությամբ, բացի չորրորդ հարկի 270 (երկու հարյուր յոթանասուն) քառակուսի մետր մակերեսով վկայականում նշված թիվ 6-18 տարածքներից, ՀԱՀ-ի կարիքների համար շենքի ժամանակավոր, անհատույց օգտագործման հանձնում: Պայմանագրի և որոշման պատճենները կցվում են: Նոր մասնաշենքի ժամանակավոր, անհատույց օգտագործման փաստացի հանձնումն իրականացվել է 2011թ.-ից, 50 (հիսուն) տարի ժամկետով, իսկ շենքի շահագործման հետ կապված ծախսերն իրականացվելու են ՀԱՀ-ի կողմից: Չորրորդ հարկի 270 (երկու հարյուր յոթանասուն) քառակուսի մետր մակերեսով տարածքը կողմերի համաձայնությամբ նույնպես պետք է օգտագործվի ՀԱՀ-ի կարիքների համար:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիայի կողմից Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամին 22, Երևան, Բաղրամյան պողոտա, թիվ 40/1 հասցեում տեղակայված շենքի ժամանակավոր, անհատույց օգտագործման հանձնում: Օրագրի շրջանակներում ապրանքների ձեռքբերում և ներմուծում, ինչպես նաև ծառայությունների մատուցում չի նախատեսվում:
11.	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	22 կառավարության Մարդասիրական ծրագրերը համակարգող հանձնաժողով, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն:
13.	Օրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նոր «Փարամազ Ավետիսյան» մասնաշենքի շահագործման օրվանից իրականացվում է սահմանված նպատակների նկատմամբ հսկողություն՝ ՀԱՀ-ի Հոգաբարձուների խորհրդի, ակադեմիական և վարչական ղեկավարման մարմինների կողմից:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**02 օգոստոսի 2017 թվականի N Մ-636-Ա**  
**քաղ. Երևան**  
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի հունիսի 23-ին)**

**ԱՄՆ-ի «ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ  
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱ-  
ԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի 2017 թվականի հունիսի 8-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 15-ի N 01.1/14-2/10758-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի օգոստոսի 2-ի N 02/14/13594-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 14-ի N 7879-Db24-7DG-9 եզրակացությունները, որոշում է.


1. Բարեգործական որակելի ԱՄՆ-ի «Ամերիկյան համալսարան» կորպորացիայի կողմից 2017 թվականի հուլիսի 1-ից մինչև 2036 թվականի հունիսի 30-ը (19 տարի) ընկած ժամանակահատվածում իրականացվող՝ 21,312,385 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին անշարժ գույքի անհատույց ժամանակավոր օգտագործման հանձնում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 01511187) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

ԱՄՆ-ի «Ամերիկյան համալսարան» կորպորացիայի հետ (300 Լեյքսայդ Դրայվ, 12-րդ հարկ, Օքլենդ, Կալիֆորնիա 94612) 2016 թվականի փետրվարի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ուսանողների համար, որպես հանրակացարան օգտագործելու նպատակով Հայաստանի Հանրապետություն, քաղ.Երևան, Սոսեի 36 հասցեում գտնվող անշարժ գույքի անհատույց ժամանակավոր օգտագործման հանձնում՝ 21,312,385 դրամ կադաստրային արժեքով:


3. «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:



**Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**





ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրամ» կազմակերպության  
Փոխնախագահ Աշոտ Ղազարյանի կողմից



«21» հունիսի, 2017թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1. Ծրագրի նպատակը	Ծրագրի հիմնական նպատակն է «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի (ՀԱՀՀ) ուսանողներին ուսանելու ընթացքում ապահովել հանրակացարանային տարածքով:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից:
3. Բարեգործը	Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիան (ՀԱՀԿ), ԱՄՆ-ում գրանցված ոչ առևտրային, շահույթ չհետապնդող կազմակերպությունը, որը հանդիսանում է Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադիրներից մեկը: Հասցե՝ Բրոդվեյ 1000, տարածք 280, Օկլենդ, Կալիֆորնիա 94607, ԱՄՆ:
4. Ծրագրի կատարողը	Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀԿ) կորպորացիա: Հասցե՝ Բրոդվեյ 1000, տարածք 280, Օկլենդ, Կալիֆորնիա 94607, ԱՄՆ
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագրի իրականացման վայրը՝ ՀՀ, Երևան, Մոսե 36 (երեսունվեց) բնակելի տուն հասցեում տեղակայված անշարժ գույք: Բնագավառը՝ կրթական:
6. Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն համապատասխանում է ՀՀ, Երևան, Մոսե 36 (երեսունվեց) բնակելի տուն հասցեում տեղակայված անշարժ գույքի կադաստրային արժեքին: Համաձայն ՀՀ կառավարության արձեթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 19/05/2017-ին տրված թիվ ԱՍ-17/05/2017-1-0183 տեղեկանքի շենքի կադաստրային արժեքը կազմում է՝ 21,312,385 (քսանմեկ միլիոն երեք հարյուր տասներկու հազար երեք հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրամը և համալսարանի ուսումնական ծրագրերում որպես մասնակից ներգրավված ուսանողները:

	Մոսե 36 բնակելի տունը հանձնվել է ՀԱՀՀ-ին անհատույց, սակայն այն հանրակացարանի վերափոխելու/վերանորոգելու ծախսերը կատարվել են, ՀԱՀՀ-ի կողմից: ՀԱՀՀ-ը իրականացնելու է նաև հանրակացարանի շահագործման, սպասարկման և պահպանման ծախսերը, որոնք չեն ազատվելու ԱՀՀ-ից: ՀԱՀՀ-ի ուսանողները վճարելու են հանրակացարանում մնալու համար, սակայն այդ գումարը կազմում է հանրակացարանի համար կատարված ծախսերի միայն հիսուն տոկոսը:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագրի իրականացման տևողությունն է 19 (տասնինը) տարի՝ 01 հունիսի 2017թ.-ից մինչև 30 հունիսի 2036թ.:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիայի և Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրամի միջև 2016թ. փետրվարի 22-ին կնքված պայմանագրի համաձայն Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիային պատկանող շենքի ժամանակավոր, անհատույց օգտագործման հանձնում Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրամին: Անշարժ գույքը օգտագործվելու է որպես ուսանողական հանրակացարան: Պայմանագրի պատճենը կցվում է: Անշարժ գույքի ժամանակավոր, անհատույց օգտագործման հանձնումն իրականացվելու է 20 (քսան) տարի ժամկետով, իսկ նշված անշարժ գույքի շահագործման հետ կապված ծախսերն իրականացվելու են ՀԱՀՀ-ի կողմից:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի ամերիկյան համալսարան կորպորացիայի կողմից Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրամին ՀՀ, Երևան, Մոսե 36 (երեսունվեց) բնակելի տուն հասցեում տեղակայված անշարժ գույքի ժամանակավոր, անհատույց օգտագործման հանձնում:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ	ՀՀ կառավարության Մարդասիրական ծրագրերը համակարգող հանձնաժողով, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերանմուծողական մեխանիզմների նկարագրությունը	Որպես ուսանողական հանրակացարանի օգտագործվող շենքի նկատմամբ օգտագործման օրվանից իրականացվում է անհատական նպատակների կատարման հակողություն՝ ՀԱՀՀ-ի Հոգաբարձուների խորհրդի, ակադեմիական և վարչական ղեկավարման մարմինների կողմից:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**3 օգոստոսի 2017 թվականի N Մ- 637 -Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2017 թվականի հուլիսի 27-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը, որ ո ղ ու մ է.*

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված և ներմուծված կաթնախառնուրդն ու կաթնազերծ խառնուրդը (19 տեղ, 8,096 կգ ընդհանուր քաշով, 69,838.72 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ 2, 600 եվրո փոխադրման ծախսերը, «Արարատյան» մաքսատուն վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԳԱԳԱԿ**

**Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 օգոստոսի 2017 թվականի N Մ-638- Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-114-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 1-ի N 03/14-2/13905-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 28-ի N 06/3-8/27323-17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից ձեռք բերված բեռը (պահպանակներ, 10,250 տուփ, 5,081 կգ ընդհանուր քաշով, 40,692.50 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 6,160 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՄԿ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին» ծրագրի մասին» N Մ-114-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 օգոստոսի 2017 թվականի N Ա- 639 - Ա  
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱՅՈՒ ՍՈՒՐԻ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
«ՄԱՅՐ ԱՅՈՒ ՍՈՒՐԻ ԷԶՄԻԱԾՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ  
ԲԱՐԵԼԱԿՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 27-ի N 03/14-2/13680-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հուլիսի 29-ի N 02/14/13361-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության արդյունաբերության նախարարության 2017 թվականի հուլիսի 27-ի N 06/3-8/27046-17 եզրակացությունները, որոնցում է:

1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 4,102,200 դրամ արժողությամբ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աշխատանքային պայմանների բարելավում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08007555) 2017 թվականի հուլիսի 3-ին կնքված՝ N 2017/0703 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «ՀՇ-Ձեռնարկություն» համակարգի ներդրման և սպասարկման աշխատանքների իրականացում՝ 4,102,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության արդյունաբերության նախարարություն կոմիտե:

ՆԱՄԱԳԻՆ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է




Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աշխատանքային պայմանների բարելավում

Ծ Ր Ա Գ Ր

10/11

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աշխատակազմի աշխատանքային պայմանների բարելավումը, որի ընթացքում նախատեսվում է «ՀՇ- Ձեռնարկություն» համակարգի բազմամասնաճառային տարբերակի սպասարկում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Եկեղեցական առաքելություն
6.	Ծրագրի բյուջեն	4.102.200 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	03 հուլիս, 2017 – 30 հունիս , 2018թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է բարելավել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աշխատակազմի աշխատանքային պայմանները, որի գումարը կազմում է 4.102.200 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Հայկական Ծրագրեր» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք. Երևան, Չարենցի փ. 1, (ՀվՀՀ 08007555), պայմանագիր կնքված 05.06.2017թ. : Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 03 հուլիս, 2017 – 30 հունիս, 2018 թ. :
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աշխատակազմի աշխատանքային պայմանների բարելավումը, որի ընթացքում նախատեսվում է «ՀՇ-Ձեռնարկություն» համակարգի բազմամասնաճառային տարբերակի սպասարկում , որի գումարը կազմում է 4.102.200 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Նախատեսվում է տեխնիկական հիշողություն: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կարգի ամփոփ տեղեկություն:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**4 օգոստոսի 2017 թվականի N Մ-640 - Ա  
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԻ ԷԶՄԻԱՇԵԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆՑՎՈՂ  
«ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԻ ԷԶՄԻԱՇԵԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 21-ի N 03/14-2/13341-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հուլիսի 25-ի N 02/14/13038-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 20-ի N 06/3-8/25676-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 1,474,615,170 դրամ արժողությամբ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2017 թվականի հուլիսի 11-ին կնքված՝ N 10Շ/017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նորոգման և մասնակի ամրակայման աշխատանքների իրականացում՝ 1,474,615,170 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին»


Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգում

10/5

Ծ Ր Ա Պ Ի Ր

1	Շրագրի նպատակը	Շրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի նորոգումը և մասնակի ամրակայման աշխատանքները:
2.	Շրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Հեղինակուր Միություն
4.	Շրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401:
5.	Շրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, եկեղեցաշինական:
6.	Շրագրի բյուջեն	1.474.615.170 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը:
8.	Շրագրի իրականացման տևողությունը	11 հուլիս, 2017 – 30 նոյեմբեր, 2019թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Շրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի նորոգումը և մասնակի ամրակայման աշխատանքները, որի գումարը կազմում է 1.474.615.170 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Հորիզոն 95» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք. Երևան, Ա.Ավետիսյան 118, ՀվՀՀ 00801721), պայմանագիր կնքված 11.07.2017թ. 010Ը/017: Շրագիրը նախատեսվում է իրականացնել 11 հուլիս, 2017 – 30 նոյեմբեր, 2019 թ.:
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի նորոգումը և մասնակի ամրակայման աշխատանքները, որի գումարը կազմում է 1.474.615.170 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:
11.	Շրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Մշակույթի նախարարություն և Էջմիածնի քաղաքապետարանի հետ:
13.	Շրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ճարտարապետական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Շրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
4 օգոստոսի 2017 թվականի N Մ - 641 - Ա  
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
«ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՄԱՍՆԱՇԵՆՔԻ  
ՔԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 19-ի N 03/14-2/13142-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հուլիսի 17-ի N 02/14/12334-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի հուլիսի 17-ի N ԱԳ/ԱՆՄ-2-1/7492-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 19-ի N 06/3-8/25336-17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 82,339,050 դրամ ընդհանուր արժողությամբ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Այգեձոր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00815501) 2017 թվականի հուլիսի 3-ին կնքված N ՀՀ/ԻՄ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բարեկարգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 81,059,050 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հազարաշեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01816381) 2017 թվականի հուլիսի 3-ին կնքված N ՀՀ-04/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում՝ 480,000 դրամի չափով, առանց

ավելացված արժեքի հարկի.


3) «Մողեռննախագիծ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00080732) 2017 թվականի հուլիսի 3-ին կնքված N ՀՀՏՀ-04/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



«Հայաստան» համահայկական  
հիմնադրամի գործադիր տնօրեն  
Արա Վարդանյան

«12» հուլիսի 2017թ.

**«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի մասնաշենքերի բարեկարգում» ԾՐԱԳԻՐ**

1.	Ծրագրի նպատակը	Բարելավել «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի երեխաների կեցության պայմանները
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Երևան քաղաք, սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 82.339.050,00 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ հուլիսի 03-ից մինչև 2017թ.դեկտեմբերի30-ը:
9.	Սիջոցառումների նկարագրությունը և	2017թ հուլիսի 03-ից մինչև 2017թ.դեկտեմբերի30-ը ընկած

10/1

	Ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ժամանակահատվածում բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 81.059.050 դրամ, հեղինակային հսկողության՝ իրականացում՝ 480.000 դրամ, տեխնիկական հսկողության իրականացում՝ 800.000 դրամ:
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ԱՅԳԵՁՈՐ» ՍՊԸ-ի կողմից բարեկարգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 81.059.050,00 դրամ առանց ԱԱՀ-ի:  «Հազարաշեն» ՍՊԸ-ի կողմից հեղինակային հսկողության իրականացում՝ 480.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:  «Մոդեռննախագիծ» ՍՊԸ-ի կողմից տեխնիկական հսկողության իրականացում՝ 800.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարձերի նախարարության հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգում համաձայնագրով (եռամսյակային եւ ամիսական հարցազրույթներ)



Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

10/1





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
4 օգոստոսի 2017 թվականի N Մ - 642 - Ա  
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ  
ԳՅՈՒԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 27-ի N 03/14-2/13676-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հուլիսի 29-ի N 02/14/13362-17, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 27-ի N 06/3-8/27034-17 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2017 թվականի հուլիսի 28-ի N 02/14.2/2907-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 14,971,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի գլխավոր մասնաշենքի ջեռուցման համակարգի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ուին զգալի նշանակություն՝

«Վահագ-Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08909901) 2017 թվականի հուլիսի 12-ին կնքված N ՀՀ/ՂՏ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 14,971,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել պնդի տեղեկատվություն:

4. Սույն որոշման հիմամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Հ Ա Ս Ս Ս Ս Վ Ա Ս Ը Է**  
«Հայաստան» համահայկական  
հիմնադրամի գործադիր տնօրեն  
Արա Վարդանյան

«25» հուլիսի 2017թ.


**«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի գլխավոր մասնաշենքի ջեռուցման համակարգի վերակառուցում» ծրագիր**

1. Ծրագրի նպատակը	Բարելավել Օշական գյուղի դպրոցի ուսուցիչների և աշակերտների աշխատանքի և ուսման պայմանները
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Անուստ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5. Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ Արագածոտնի մարզ, Օշական գյուղ, կրթության բնագավառ
6. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 14.971.500,00 դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցը

10/2

8.	Ծրագրի իրականացման տեւողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ հուլիսի 12-ից մինչև 2017թ հոկտեմբերի 12-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2017թ հուլիսի 12-ից մինչև 2017թ. հոկտեմբերի 12-ը ջեռուցման ներքին համակարգի վերակառուցում 14.971.500 դրամ արժողությամբ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՎԱՅԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Օշական գյուղի դպրոցի հիմնական մասնաշենքի ջեռուցման ներքին համակարգի ամբողջական վերակառուցում 14.971.500,00 դրամ առանց ԱԱՀ-ի
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Արագածոտնի մարզպետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի (եռամսյակային եւ ամիսի հաշվետվություններ)

Ներկայացրեց գործադիր  
տնօրենի խորհրդական՝  
Արմինա Դարբինյանը



10/12



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**4 օգոստոսի 2017 թվականի N Մ - 643 - Ա  
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՈՂ  
«ՎԱՐԴԵՆԻՍ-ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՐԹԵՎԵԿԵԼԻ ՄԱՍԻ  
ՆՇԱԳԾՈՒՄ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ  
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 27-ի N 03/14-2/13679-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հուլիսի 29-ի N 02/14/13360-17, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2017 թվականի հուլիսի 28-ի N 01/14.1/14225-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության աղբյուրներ պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 27-ի N 06/3-8/270359-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 85,091,796 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի երթևեկելի մասի նշագծում և տեղեկատվական վահանակների պատրաստում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝


1) «Մեդրու ՃՇՇՁ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09700228) 2017 թվականի հուլիսի 20-ին կնքված N Ծ-ԱՃ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ճանապարհի նշագծման աշխատանքների իրականացում՝ 79,901,019 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «ԴՈՈՂՆԱԿ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00853017) 2017 թվականի օգոստոսի 2-ին կնքված N Ծ-ԱՃ-03/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է


տեղեկատվական վահանակների պատրաստում՝ 5,190,777 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղբյուրներ պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի երթևեկի մասի նշագծում և տեղեկատվական վահանակների պատրաստում» ԾՐԱԳԻՐ**


1.	Ծրագրի նպատակը	Համապատասխանեցնել մեր կողմից կառուցվող Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհը ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգի միջազգային ստանդարտներին
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն, ճանապարհաշինության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 85.091.796,00 ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետություն և Արցախի Հանրապետություն
8.	Ծրագրի իրականացման տեղությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ հուլիսի 20-ից մինչև 2017թ նոյեմբերի 20-ը:

2

9.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2017թ հուլիսի 20-ց մինչև 2017թ. նոյեմբերի 20-ը նշագծել Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի 54.450 մ2 երթևեկի մասը՝ 79.901.019,00 դրամ արժողությամբ:  Անհրաժեշտ տեղեկատվական վահանակներ պատրաստել Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի համար 5.190.777,00 արժողությամբ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը	«ՄԵՂՈՒ ԵՇԵՁ» ՍՊԸ-ի կողմից նշագծման աշխատանքների իրականացում 79.901.019,00 դրամ առանց ԱԱՀ-ի:  «ԴՈՈՋԼԱԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն տեղեկատվական վահանակների պատրաստում 5.190.777,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԱՀ կառավարության հետ
13.	Ծրագրի արդյունավետության վերահսկողության մեխանիզմները նկարագրությունը	Վերահսկողության նկատմամբ վերահսկողությունը կատարվում է ՀՀ կառավարության բարեգործական համակարգում հանձնաժողովի կողմից (հավելում աղյուսակի եւ անկախ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդակցանք

Արմինա Դարբինյանը





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**4 օգոստոսի 2016 թվականի N Մ- 644 -Ա**  
**քաղ. երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳՐԻ  
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 19-ի N 03/14-2/13143-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հուլիսի 18-ի N 02/14/12506-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի հուլիսի 17-ի ԱԱՄ/ԱնՄ-2-1/7481-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի հուլիսի 21-ի 03/07-1/9682-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 17-ի N 06/3-8/24969-17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակելի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 53,014,500 դրամ ընդհանուր արժեքով արժեքավոր «Ամառային դպրոցի կազմակերպում» ծրագիրը (կցվում է):

6	Պայուսակ օգտագործված	արկղ	10	98	150	194	<p>2 արևոյ - ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարություն</p> <p>2 արևոյ - «Չապել» Բարեգործական Հասարակական Կազմակերպություն</p> <p>2 արևոյ - «Ալեն» Հասարակական Բարեգործական Կազմակերպություն</p> <p>2 արևոյ - «Աստղաթև» Հաշմանդամ երեխաների ծնողների Հասարակական Կազմակերպություն</p> <p>2 արևոյ - «Ազատամարտի վետերանների սոցիալ-վերականգնողական» Հիմնադրամ</p>
7	Ծածկոց օգտագործված	արկղ	25	213	230	326	<p>3 արևոյ - ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարություն</p> <p>2 արևոյ - «Լիարժեք Ընտանիք» Սոցիալական Հասարակական Կազմակերպություն</p> <p>2 արևոյ - «Լույսի շող» Բարեգործական Կազմակերպություն</p> <p>2 արևոյ - «Իմաստուն կույսեր» հաշմանդամ և ծնողազուրկ երեխաների Հասարակական Կազմակերպություն</p> <p>2 արևոյ - «Ալեքս» Բարեգործական Հասարակական Կազմակերպություն</p> <p>2 արևոյ - «Չապել» Բարեգործական Հասարակական Կազմակերպություն</p> <p>2 արևոյ - «Վարդենիկ» ազատամարտի վետերանների Հասարակական Կազմակերպություն</p> <p>2 արևոյ - «Չնաբերդ» Բարեգործական Հասարակական Կազմակերպություն</p> <p>2 արևոյ - «Հոգաբարձուների խորհուրդ» Բարեգործական Հասարակական Կազմակերպություն</p> <p>2 արևոյ - «Հասմիկ Հաշմանդամ երեխաների ծնողների» Հասարակական Կազմակերպություն</p> <p>2 արևոյ - «Հելփ» Բարեգործական Հասարակական Կազմակերպություն</p> <p>2 արևոյ - «Սուրբ Հեղինե» Բարեգործական Հասարակական Կազմակերպություն</p> <p>6 արևոյ - «Նոյաստղ» Հաշմանդամ երեխաների ծնողների Հասարակական Կազմակերպություն</p> <p>10 արևոյ - «Աստղավարդ» Հաշմանդամ երեխաների ծնողների Հասարակական Կազմակերպություն</p>
8	Կտորի լուսկոտներ օգտագործված	արկղ	16	167.4	105	180	<p>6 արևոյ - «Նոյաստղ» Հաշմանդամ երեխաների ծնողների Հասարակական Կազմակերպություն</p> <p>10 արևոյ - «Աստղավարդ» Հաշմանդամ երեխաների ծնողների Հասարակական Կազմակերպություն</p>

9	Կարի մեքենա օգտագործված	հատ	2	25	40	52	<p>1 հատ - «Նոյաստղ» Հաշմանդամ երեխաների ծնողների Հասարակական Կազմակերպություն</p> <p>1 հատ - «Աստղավարդ» Հաշմանդամ երեխաների ծնողների Հասարակական Կազմակերպություն</p>
10	Չեմակներ օգտագործված	հատ	10	130	90	148	<p>1 հատ - «Չնաբերդ» Բարեգործական Հասարակական Կազմակերպություն</p> <p>9 հատ - «Նյու Լայֆ Արմենիա» ԲՀ-ի անհատ շահառուներ</p>
11	Ձեռնափայտ օգտագործված	զույգ	4	4	8	10	<p>4 զույգ - «Նյու Լայֆ Արմենիա» ԲՀ-ի անհատ շահառուներ</p>
12	Սրբիկներ օգտագործված	արկղ	11	110	100	149	<p>11 արևոյ - «Նյու Լայֆ Արմենիա» ԲՀ-ի անհատ շահառուներ</p>
			8	64	80	109	<p>8 արևոյ - «Նյու Լայֆ Արմենիա» ԲՀ-ի անհատ շահառուներ</p>
			805	8435	5308	9103	





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**04 օգոստոսի 2017 թվականի N Մ-666- Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-  
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Հայկական ակնաբու-  
ժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 14-ի N 01.1/14-2/12850-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 13-ի N 06/3-8/24514-17 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից՝ «Abbott» կազմակերպության (ակնաբուժական վիրահատական պարագաներ), «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (5 տեղ, 10.5 կգ ընդհանուր քաշով, 28,125.7 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լոյս» հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**04 օգոստոսի 2017 թվականի N Մ-667- Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-  
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (1)  
(«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական  
հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 14-ի N 01.1/14-2/12848-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հուլիսի 17-ի N Ն2/22.2/9053-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 13-ի N 06/3-8/24512-17 եզրակացությունները, — **ո-ր-ո-շ-ո-ւ-մ է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից՝ «Davis Dental» կազմակերպության «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (ակնաբուժական դեղորայք՝ 2 տեղ, 13.5 կգ ընդհանուր քաշով, 2,698.60 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լոյս» հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



**Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**04 օգոստոսի 2017 թվականի N Մ-668- Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-  
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Հայկական ակնաբու-  
ժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) (2)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 25-ի N 03/14-2/13519-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հուլիսի 25-ի N Ն2/22.2/9408-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 25-ի N 06/3-8/26566-17 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից՝ «AiconPharmaceuticals» կազմակերպության միջոցով ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը՝ (ակնաբուժական վիրահատական պարագաներ՝ 1 տեղ, 5,44 կգ ընդհանուր քաշով, 2,663 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լոյս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԻԾ**



**Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


04 օգոստոսի 2017 թվականի N Մ-669- Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՐՏԻ 31-Ի N Մ-273-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան  
մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 14-ի N 01.1/14-2/12852-17 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հուլիսի 17-ի N Ն2/22.2/9052-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 13-ի N 06/3-8/24402-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք՝ Daclatasvir՝ 252 դեղահաբ (30մգ) 1 արկղ, 1 կգ քաշով, 2,981.43 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 214.81 եվրո, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 31-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2017-2018 թվականներին իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն» ծրագրի մասին» N Մ-273-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
04 օգոստոսի 2017 թվականի N Մ-670- Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ,  
ԿՈՎԿԱՍԻ ԲԵՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԶԱՆԳԵԶՈՒՐ» ԿԵՆՏՐՈՆՐՏԱՅԻՆ ՀԱ-  
ՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 04.07.2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐԸՐ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ  
2017 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպա-  
նության նախարարության 2017 թվականի հուլիսի 27-ի N 5/08.2/51557-17 գրությունը և  
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի  
2-ի N 03/14-2/13991-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարու-  
թյան 2017 թվականի օգոստոսի 1-ի N 02/14/13516-17 ու Հայաստանի Հանրապետության  
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի  
2-ի N 6/3-8/28061-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նա-  
խարարության կողմից իրականացվող՝ 25,975,000 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստա-  
նի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնա-  
դրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 04.07.2017 թվականին  
կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի»  
ծրագիրը (կցվում է):


2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատա-  
կարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճեն-  
ները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաս-  
տանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ա-  
զատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:


2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով  
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-

ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված  
ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մա-  
տակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավար-  
տից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաս-  
տանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապե-  
տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի  
Հանրապետության կառավարությանը մարզպետին:



**Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**




Ծ Ր Ա Գ Ի Ր

«Հանրապետության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Ջանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 04.07.17թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի

1. Ծրագրի նպատակը	«Ջանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակաուղղված պետական արգելոցի պահպանության բարելավմանը, ինչպես նաև «Ջանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Կովկասի Բնության Հիմնադրամ, Թուլպենիստրաստ 18, 63067 ՕՖՖենբախ, Գերմանիա
4. Ծրագիրը կատարողը	«Հանրապետության նախարարության աշխատակազմ
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Սյունիքի մարզ, գ.Շիկահող «Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն»
6. Ծրագրի բյուջեն	Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Ջանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի համար «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկո Բանկ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում՝ 25 975 000 ՀՀ դրամ: Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 9-ի:
7. Բարեգործություն ստացողը	«Ջանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ, Սյունիքի մարզ, գ.Շիկահող
8. Ծրագրի իրականացման տևողությունը	28.07.2017թ. – 31.12.2017թ.

10/5

9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<p>«Հանրապետության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Ջանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 03.02.2017թ. կնքված արտակարգ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի ծրագիր՝ 28.07.2017թ. – 31.12.2017թ., բյուջեն - 25 975 000 ՀՀ դրամ, այդ թվում՝</p> <p>1. Ծառայությունների ձեռքբերում - 1 635.0 հազար դրամ 3-4-րդ եռամսյակներ, այդ թվում՝</p> <table border="1"> <thead> <tr> <th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th> <th>Չափի միավորը</th> <th>Ամբողջ քանակը (ծավալը)</th> <th>Ընդհանուր գումարը (հազար դրամ)</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր</td> <td>դրամ</td> <td>1</td> <td>50.0</td> </tr> <tr> <td>Կապի ծառայություններ</td> <td>դրամ</td> <td>1</td> <td>100.0</td> </tr> <tr> <td>Նավիգացիոն սարքերի տեղադրման ծառայություններ</td> <td>դրամ</td> <td>1</td> <td>540.0</td> </tr> <tr> <td>Համակարգչային ծառայություններ</td> <td>դրամ</td> <td>1</td> <td>145.0</td> </tr> <tr> <td>Ներկայացուցչական ծախսեր</td> <td>դրամ</td> <td>1</td> <td>800.0</td> </tr> </tbody> </table>	Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամ)	Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	դրամ	1	50.0	Կապի ծառայություններ	դրամ	1	100.0	Նավիգացիոն սարքերի տեղադրման ծառայություններ	դրամ	1	540.0	Համակարգչային ծառայություններ	դրամ	1	145.0	Ներկայացուցչական ծախսեր	դրամ	1	800.0
	Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամ)																					
Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	դրամ	1	50.0																						
Կապի ծառայություններ	դրամ	1	100.0																						
Նավիգացիոն սարքերի տեղադրման ծառայություններ	դրամ	1	540.0																						
Համակարգչային ծառայություններ	դրամ	1	145.0																						
Ներկայացուցչական ծախսեր	դրամ	1	800.0																						
<p>2. Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում - 3 195.0 հազար դրամ 3-4-րդ եռամսյակներ, այդ թվում՝</p> <table border="1"> <thead> <tr> <th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th> <th>Չափի միավորը</th> <th>Ամբողջ քանակը (ծավալը)</th> <th>Ընդհանուր գումարը (հազար դրամ)</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություն</td> <td>դրամ</td> <td>1</td> <td>2 995.0</td> </tr> <tr> <td>Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ</td> <td>դրամ</td> <td>1</td> <td>200.0</td> </tr> </tbody> </table>	Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամ)	Ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություն	դրամ	1	2 995.0	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	դրամ	1	200.0													
Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամ)																						
Ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություն	դրամ	1	2 995.0																						
Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	դրամ	1	200.0																						



3. Հազուադի ձեռքբերում - 440.0 հազար դրամ 3-4-րդ եռամսյակներ, այդ թվում՝


Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամ)
Կորպորատիվ համազգեստ	հատ	11	440.0

10/5

	<p>4. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում - 4 944.0 հազար դրամ 3-4-րդ եռամսյակներ, այդ թվում՝</p> <table border="1"> <thead> <tr> <th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th> <th>Չափի միավորը</th> <th>Ամբողջ քանակը (ծավալը)</th> <th>Ընդհանուր գումարը (հազար դրամ)</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Բենզին «Ռեզոլյար»</td> <td>լիտր</td> <td>9300</td> <td>3255.0</td> </tr> <tr> <td>Դիզելային վառելիք</td> <td>լիտր</td> <td>2100</td> <td>714.0</td> </tr> <tr> <td>Սեղմված բնական գազ</td> <td>խ.մ</td> <td>5000</td> <td>900.0</td> </tr> <tr> <td>Հակասառիչ հեղուկ</td> <td>լիտր</td> <td>50</td> <td>75.0</td> </tr> </tbody> </table> <p>5. Այլ ծախսեր - 307.1 հազար դրամ 3-4-րդ եռամսյակներ, այդ թվում՝</p> <table border="1"> <thead> <tr> <th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th> <th>Չափի միավորը</th> <th>Ամբողջ քանակը (ծավալը)</th> <th>Ընդհանուր գումարը (հազար դրամ)</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Ձեռնարկների և բրոշյուրների տպագրման ծառայություններ</td> <td>դրամ</td> <td>1</td> <td>307.1</td> </tr> </tbody> </table> <p>6. «Ձանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի անձնակազմի լրացուցիչ վարձատրություն (յուրաքանչյուր եռամսյակ) - 15 453.9 հազար դրամ:</p>	Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամ)	Բենզին «Ռեզոլյար»	լիտր	9300	3255.0	Դիզելային վառելիք	լիտր	2100	714.0	Սեղմված բնական գազ	խ.մ	5000	900.0	Հակասառիչ հեղուկ	լիտր	50	75.0	Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամ)	Ձեռնարկների և բրոշյուրների տպագրման ծառայություններ	դրամ	1	307.1
Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամ)																										
Բենզին «Ռեզոլյար»	լիտր	9300	3255.0																										
Դիզելային վառելիք	լիտր	2100	714.0																										
Սեղմված բնական գազ	խ.մ	5000	900.0																										
Հակասառիչ հեղուկ	լիտր	50	75.0																										
Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամ)																										
Ձեռնարկների և բրոշյուրների տպագրման ծառայություններ	դրամ	1	307.1																										
<p>10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	<p>1. Ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 1 635.0 հազար դրամ:</p> <p>2. Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 3 195.0 հազար դրամ:</p> <p>3. Հազուադի ձեռքբերում - 440. հազար դրամ:</p> <p>4. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 4 944.0 հազար դրամ:</p> <p>5. Այլ ծախսեր (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 307.1 հազար դրամ:</p>																												
<p>11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը</p>	<p>1. Ծառայությունների ձեռքբերում</p> <ul style="list-style-type: none"> <li>• Գործառնական և բանկային ծառայություններ - 50.0 հազար դրամ,</li> <li>• Կապի ծառայություններ - 100.0 հազար դրամ,</li> <li>• Համակարգչային ծառայություններ - 145.0 հազար դրամ,</li> </ul>																												

5/10/18

	<ul style="list-style-type: none"> <li>• Նավիգացիոն սարքերի տեղադրման ծառայություններ - 540.0 հազար ՀՀ դրամ,</li> <li>• Ներկայացուցչական ծախսեր - 800.0 հազար դրամ</li> </ul> <p>2. Այլ ծախսեր - 307.1 հազար դրամ</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ձեռնարկների և բրոշյուրների տպագրման ծառայություններ - 307.1 հազար դրամ:</li> </ul>
<p>12. Համագործակցությունը պետական կառավարման տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպչական կազմակերպությունների հետ</p>	<p>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և ՀՀ Սյունիքի մարզպետարանի հետ</p>
<p>13. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը</p>	<p>Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը:</p>



«Ձանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն

Վ.Գևորգյան

5/10/18



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**04 օգոստոսի 2017 թվականի N Մ-671- Ա  
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի  
N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-  
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Հայկական ակնաբու-  
ժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) (3)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 1-ի N 03/14-2/13936-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հուլիսի 31-ի N Ն2/22.2/9671-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 1-ի N 06/3-8/27927-17 եզրակացությունները, **որոշում է.**

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից «CargoJet Line» կազմակերպության միջոցով ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը՝ (ակնաբուժական վիրահատական պարագաներ՝ 8 տեղ, 57 կգ ընդհանուր քաշով, 73,564 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս» հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻԾ

**Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

04 օգոստոսի 2017 թվականի N Մ-672- Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N Մ-739-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն»  
(«Թափոնների ուսումնասիրության կենտրոն») ՊՈԱԿ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-  
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահ-  
պանության նախարարության 2017 թվականի օգոստոսի 2-ի N 5/06.2/51600-17 գրությունը և  
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի  
3-ի N 01.1/14-2/14153-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր  
պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 4-ի N 06/3-8/28597-17  
եզրակացությունները, **ո Ր Ո Շ Մ Ա Մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարա-  
րության, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և «Թափոնների  
ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի («Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատ-  
վության կենտրոն» ՊՈԱԿ) միջև 2016 թվականի մարտի 18-ին կնքված՝ դրամաշնորհային  
ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գոր-  
ծարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության  
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 5-ի  
«Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, ՄԱԿ-ի արդյունա-  
բերական զարգացման կազմակերպության և «Թափոնների ուսումնասիրության կենտրոն»  
ՊՈԱԿ-ի միջև 18.03.2016 թվականին կնքված՝ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում  
ֆինանսավորվող 2016-2017 թվականների ծրագրի մասին» N Մ-739-Ա որոշմամբ հաս-  
տատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալ Պառկո Հյուրանոց» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02633149) 2017 թվականի հուլիսի 31-ին  
կնքված՝ N «ՇՄՄՏԿ-ԾՁԲ-17/1 պայմանագրի N 1 հավելվածում նախատեսված «Թափոնների  
բաց այրման կանխարգելում» խորագրով ուսուցողական աշխատաժողովի կազմակերպման  
աշխատանքների իրականացում՝ 410,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի  
հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաս-  
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

04 օգոստոսի 2017 թվականի N Մ-673- Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՄԿԱՐԻ 27-Ի N Մ-044-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հովարդ Կարագյոզյան» բժշկա-  
կան բարեգործական հասարակական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-  
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հովարդ Կարագյոզյան» բժշկական  
բարեգործական հասարակական կազմակերպության 2017 թվականի հուլիսի 25-ի N 87/17  
գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017  
թվականի օգոստոսի 01-ի N 03/14-2/13954-17 ու Հայաստանի Հանրապետության կառա-  
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 28-ի N 06/3-8/27322-17  
եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-  
մակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Երեխաների անվճար  
բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-044-Ա որոշմամբ հաստատ-  
ված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝


1) որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետի 1-ին ենթակետում «(բուժ. սրբավորում-  
ների,» բառերից հետո կարդալ «հաճախորդների գրանցման համար նախատեսված համա-  
կարգչային ծրագիրը շահագործելու նպատակով համակարգչային տեխնիկայի ձեռքբերման»  
բառերը.

2) ծրագրի 10-րդ կետի 1-ին ենթակետում «(բուժ. սրբավորումների,» բառերից հետո  
կարդալ «հաճախորդների գրանցման համար նախատեսված համակարգչային ծրագիրը  
շահագործելու նպատակով համակարգչային տեխնիկայի ձեռքբերման» բառերը:

2. Սահմանել, որ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակա-  
կան կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01533153) կնքված՝ ստորև նշված պայմանագրով  
նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված  
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱԶ- ի հետ (ՀՎՀՀ՝ 21304935) 2017 թվականի  
հուլիսի 19-ին կնքված՝ N Գ-16/2017 պայմանագրի N 1 հավելվածում նշված «Հովարդ Կարա-  
գյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության բոլոր կլինիկա-  
ների գրանցման բաժիններում՝ հաճախորդների գրանցման համար նախատեսված համա-  
կարգչային ծրագիրը շահագործելու նպատակով, համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝  
3,449,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-  
մուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
4 օգոստոսի 2017 թվականի N Մ - 674 - Ա  
քաղ. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՅ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ՕԼԻՄՊՈՍ»  
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ-ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ  
ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 1-ի N 03/14-2/13958-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի օգոստոսի 1-ի N 02/14/13515-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի հուլիսի 31-ի N 01/07.1/10165-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 28-ի N 06/3-8/27321-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 10,792,100 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի «Օլիմպոս» կրթահամալիր-ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի պատուհանների պատրաստում և տեղադրում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՎԱՀԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08909901) 2017 թվականի հուլիսի 17-ին կնքված N ՀՀ-4-06/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պատուհանների պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 10,792,100 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի

Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևան քաղաքի «Օլիմպոս» կրթահամալիր-ավագ դպրոց:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ց Ը

«Հայաստան» համահայկական  
հիմնադրամի գործադիր տնօրեն  
Արա Վարդանյան



«25» հունիսի 2017թ.

«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի «Օլիմպոս» կրթահամալիր-ավագ դպրոց ՊՈԱԿ-ի պատուհանների պատրաստում և տեղադրում» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Բարելավել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի «Օլիմպոս» կրթահամալիր-ավագ դպրոց ՊՈԱԿ-ի սաների ուսումնառության պայմանները
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Հանգանակություններից ստացված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ ք. Երևան, կրթության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 10.792.100,00 ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի «Օլիմպոս» կրթահամալիր-ավագ դպրոց ՊՈԱԿ-ը

1/01/18

8.	Ծրագրի իրականացման տեղությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ հունիսի 17-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 17-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2017թ հունիսի 17-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 17-ը պատուհանների պատրաստում, գնում և տեղադրում՝ 10.792.100,00 դրամ արժողությամբ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՎԱՀԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի «Օլիմպոս» կրթահամալիր-ավագ դպրոց ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի 2-րդ, 3-րդ և 4-րդ հարկերի համար նոր պատուհանների պատրաստում, գնում և տեղադրում՝ 10.792.100,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
13.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն կրթության և գիտության նախարարության հետ
14.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Կրթության նախարարության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է համագործակցության բարեգործական ծրագրերի համակարգման մեխանիզմների (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):



Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդակցան՝

Արմինա Դարբինյանը

1/01/18





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
4 օգոստոսի 2017 թվականի N Մ - 675 - Ա  
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ  
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի -ի N 01.1/14-2/ -17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հուլիսի -ի N 02/14/ -17, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի -ի N 06/3-8/ 9-17 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2017 թվականի հուլիսի -ի N 02/14/ -17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 169,720,800 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքում մանակարտեզի կառուցում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «N 1 Շինվաչություն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08404037) 2017 թվականի հուլիսի 10-ին կնքված եռակողմ N ՀՀ/Մ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկապարտեզի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 167,820,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.


2) «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09811047) 2017 թվականի հուլիսի 10-ին կնքված N ՀՀՏՀ-05/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկապարտեզի կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 1,900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



«Հայաստան» համահայկական  
հիմնադրամի գործադիր տնօրեն  
Արա Վարդանյան


«1» հուլիսի 2017թ.

«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքում մանկապարտեզի կառուցում»  
ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակը	Բարելավել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքի բնակիչների ընտանիքների կյանքի պայմանները
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5. Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ Տավուշի մարզ, Իջևան քաղաք, սոցիալական բնագավառ
6. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 169.720.800,00 դրամ:
7. Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքի բնակիչները
8. Ծրագրի իրականացման տեւողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ հուլիսի 10-ից մինչեւ 2019թ. մարտի 10-ը

9. Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2017թ. հուլիսի 10-ից մինչեւ 2019թ. մարտի 10-ը մանկապարտեզի կառուցման աշխատանքների իրականացում 167.820.800,00 դրամ արժողությամբ  տեխնիկական հսկողության իրականացում 1.900.000,00 դրամ արժողությամբ
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«N 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի կողմից կառուցման աշխատանքների իրականացում 167.820.800,00 դրամ առանց ԱԱՀ-ի  «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում 1.900.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվելու է ՀՀ կառավարության կողմից ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եւսման կային եւ անփոփ հաշվետվություններով)

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական  
Արմինա Դարբինյանը





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 օգոստոսի 2017 թվականի N Մ - 676 - Ա  
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՎՐԱ ԳՅՈՒՂԻ  
ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայասրանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայասրանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 1-ի N 03/14-2/13965-17, Հայասրանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի օգոստոսի 1-ի N 02/14/ 13503-17, Հայասրանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 1-ի N 06/3-8/27890-17 և Հայասրանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2017 թվականի օգոստոսի 1-ի N 01/5221-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Բարեգործական դրակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 6,390,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղի մանկական խաղահրապարակի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (<ՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շինկարկաս» ՍՊԸ-ի հետ (<ՎՀՀ՝ 05521676) 2017 թվականի հուլիսի 20-ին կնքված N ՀՀ/ԲՄ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկական խաղահրապարակի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 6,390,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Շիրակի մարզպետարանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՄԻՍՈՆՅԱՆ




Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ս Է  
«Հայաստան» համահայկական  
հիմնադրամի գործարքի տնօրեն  
Արա Վարդանյան  
«28» հուլիսի 2017թ.

« Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղի մանկական  
խաղահրապարակի վերակառուցում »  
Ծ Ր Ա Գ Ի Ր

10/3

1. Ծրագրի նպատակը	Բարելավել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղի երեխաների ժամանցի պայմանները
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Շիրակի մարզ, Բավրա գյուղ, սոցիալական բնագավառ
6. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 6.390.000,00 դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա համայնքի բնակիչները
8. Ծրագրի իրականացման տնտրությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ հուլիսի 20-ից մինչև 2017թ. նոյեմբերի 20-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը 2017թ հուլիսի 20 -ից մինչեւ 2017թ. նոյեմբերի 20-ը մանկական խաղահրապարակի վերակառուցում 6.390.000,00 ՀՀ դրամ արժողությամբ
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը «Շինկարկաս» ՍՊԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղի խաղահրապարակի վերակառուցման աշխատանքների իրականացում 6.390.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ Նախատեսվում է համագործակցություն Շիրակի մարզպետարանի հետ
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ՀՀ կառավարության բարեգործական ծախսերի համակարգման հանձնաժողովի կողմից (նախնական հիմնովի հաշվետվություններ):



Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝ Արմինա Դարբինյանը

10/10/17



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 օգոստոսի 2017 թվականի N Մ - 677 - Ա

քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ  
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 1-ի N 03/14-2/13955-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օգոստոսի 3-ի N 06/3-8/28215-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից, Արցախի Հանրապետության հանրային հեռուստատեսության համար «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված լուսային սարքավորումների և խտասկավառակների (23.90 կգ, 1,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 65 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բերի համապատասխան ձևակերպումն ավարտելուց և հանձնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 օգոստոսի 2017 թվականի N Մ- 678 - Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ  
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայասրանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայասրանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 1-ի N 03/14-2/13932-17 և Հայասրանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 3-ի N 06/3-8/28215-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վարդան Կիրոպի Կիրոյանցի (անձնագիր՝ N 03 05 546287, տրված՝ 07.09.2004թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված շինարարական ապրանքների (20,980 կգ ընդհանուր քաշով, 857,326.60 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՁԵՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


4 օգոստոսի 2017 թվականի N Մ- 679 - Ա  
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ  
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 1-ի N 03/14-2/13934-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 3-ի N 06/3-8/28212-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վարդան Կիրոպի Կիրոյանցի (անձնագիր՝ N 03 05 546287, տրված՝ 07.09.2004թ.) կողմից «Ստրոյ-տեկ» կազմակերպության միջոցով Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված շինարարական ապրանքների (21,560 կգ ընդհանուր քաշով, 478,754 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատուց հանձնվելու է Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱՐԱՐԱՆ  


Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**4 օգոստոսի 2017 թվականի N Մ- 680 - Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ  
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 1-ի N 03/14-2/13940-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի օգոստոսի 1-ի N Ն2/22.2/9743-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 4-ի N 06/3-8/28565-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

